ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 3 - 4 (16301) ՇԱԲԱԹ, 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՑԵՐԸ

44,5 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Եվրամիության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով եվրակոմիսար Իոհաննես Հանը:

Այցի շրջանակներում, եվրակոմիսարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլու, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով Դավիթ Բաքրաձեի հետ:

Հանդիպումներում քննարկվեցին Վրաստան-Եվրամիություն օրակարգի հրատապ հարցերը, Եվրամիության հովանու ներքո Վրաստանում իրականացվող տնտեսական նախագծերը: Առանձնակի քննարկման առարկա դարձավ Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների, Մոսկվայի կողմից Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում իրականացվող քաղաքականության հետ առնչվող հարցերը: Վրացական կողմի հավաստմամբ, Վրաստան-Եվրամիություն հարաբերությունները թեւակոխում են բացարձակապես նոր փուլ: Ինչպես նշեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Վրաստանի կառավարությունը պատրաստվում է արեւելյան գործընկերության Ռիգա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԸ ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Դ.ՋԱԼԱՂԱՆԻԱ. «ՀՈՒՍՈՎ ԵՆՔ, ՈՐ ՀԱՆՑԱԳՈՐԾԸ ԿՊԱՏԺՎԻ ՕՐԵՆՔԻ ՈՂՋ ԽՍՏՈՒԹՅԱՄԲ»

Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Դավիթ Ջալաղանիան ցավակցություն է հայտնել Գյումրիում ռուս զինվորի կողմից գնդակահարված Ավետիսյանների ընտանիքի հարազատներին:

Վրաց դիվանագետը ԱԳՆ-ի անունից տեղի ունեցածն անվանեց «ցնցող փաստ»: Ինչպես նա հայտարարեց ԶԼՄ-ների ներկայացուցիչներին, «մեղավորը պետք է պատասխանի օրենքի ողջ խստությամբ»: «Այն, ինչ տեղի ունեցավ Գյումրիում, ցնցել է մեզ, վրդովված ենք խաղաղ ընտանիքի դեմ իրականացված սահմռկեցուցիչ ոճրագործության համար եւ անկեղծ ցավակցություն ենք հայտնում զոհված ընտանիքի հարազատներին: Ցանկանում ենք հուսալ, որ հանցագործը կպատժվի օրենքի ողջ խստությամբ»,- հայտարարեց Ջալաղանիան:

Վրաստանում Հայաստանի դեսպանության մոտ վրացական մի շարք կուսակցությունների եւ կազմակերպությունների կողմից անցկացվեց համերաշխության գործողություն: Ակցիայի մասնակիցները դեսպանության շենքի մոտ բերեցին ծաղիկներ, երկու երկրների դրոշները, մոմեր վառեցին:

Ակցիայի կազմակերպիչներից մեկի՝ Գիորգի Չինչալաձեի խոսքերով, գործողությունը ծրագրվել է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով եւ հետապնդում է հայ ժողովրդին համերաշխություն արտահայտելու նպատակ: «Մենք ցավակցում եւ զորակցում ենք Ավետիսյանների հարազատներին, Գյումրիի ողջ բնակչությանը: Համամիտ ենք Ավետիսյանների ընտանիքի դեմ ոտնձգություն կատարած ոճրագործին օրենքի ողջ խստությամբ պատժի ենթարկելու Գյումրիի բնակիչների եւ ողջ հայ ժողովրդի կարծիքի հետ»,- հայտարարեց Չինչալաձեն:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԱՋԱՏԱԿԱՆԱՑՈՒՄՆ Է»

Աշխարհի քաղաքական ու գործարար ընտրախավի ներկայացուցիչները շվեյցարական Դավոս քաղաքում, հունվարի 21-24-ին ամենամյա Համաշխարհային տնտեսական համաժողովի ընթացքում, քննարկեցին զինված հակամարտությունների սրվելու եւ տնտեսական ճգնաժամի ֆոնին աշխարհում վստահության վերականգնման ուղիները:

Համաժողովի աշխատանքին մասնակցեց նաեւ Վրաստանի պաշտոնական պատվիրակությունը՝ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին փոխվարչապետ եւ էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, ԱԳ նախարար Թամար Բերուչաշվիլին, «Համաներդրում» հիմնադրամի գործադիր տնօրեն Գիորգի Բաճիաշվիլին, ազգային ներդրումային գործակալության տնօրեն Գիորգի Պերտաիան, «Վրացական երկաթուղու» գլխավոր տնօրեն Մամուկա Բախտաձեն:

Ելույթ ունենալով գագաթաժողովին՝ Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ Վրաստանի տնտեսական քաղաքականության առաջնահերթությունն առեւտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ Ի ՀԻՇԱՏԱԿ ՁՈՀՎԱԾ ԱՎԵՏԻՍՅԱՆՆԵՐԻ

Հունվարի 12-ին Գյումրիում տեղի ունեցած զարհուրելի սպանության լուրը ցնցեց մեզ՝ վիրահայերիս:

Ողբերգորեն զոհված Ավետիսյանների հիշատակին նվիրված հոգեհանգստի եւ մոմավառության արարողություններ անցկացվեցին Թբիլիսիի, Բաթումիի, Ախալքալաքիի, Ախալցիխեի, Նինոծմինդայի, Ծալկայի, Վրաստանի հայաբնակ բնակավայրերի բոլոր եկեղեցիներում: Վիրահայերս միանում ենք կատարած ծանր հանցանքի համար ոճրագործին օրենքի ողջ խստությամբ պատժելու համաժողովրդական պահանջին:

«Վրաստան» թերթի խմբագրությունը իր եւ բազմաթիվ ընթերցողների անունից զորակցություն է հայտնում Գյումրիում ողբերգորեն զոհված Ավետիսյանների ընտանիքի հարազատներին ու բարեկամներին, ողջ Գյումրիի բնակչությանը:

(Թեմայի շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵՐՁԱՎՈՐ ՀԱՐԵՎԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՄՏԵՐԻՄ ԲԱՐԵԿԱՄ ԵՐԿՐՈՒՄ»

Հարցազրույց՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի հետ

- Նախ մի քանի խոսք՝ Ձեր մասին: Հաճախ ենք լսել Ձեր մարզական ձեռքբերումների մասին, նշանակալի աշխատանքային փորձ եք կուտակել նաեւ Հայաստանի կառավարության բարձր պաշտոններում:

- Անշուշտ, ինձ համար հաճելի է, որ սպորտի երկրպագուները չեն մոռանում մարզական ձեռքբերումներս: Մարզական կարիերայիս ընթացքում քրտաջան աշխատանքի շնորհիվ ինձ հաջողվել է նվաճել ամենաբարձր «գագաթները», ըմբոշխնել երկրպագուների սերն ու հիացմունքը, բնականաբար, կյանքիս այդ ժամանակաշրջանի հիշողությունները շատ թանկ են ինձ համար: Սակայն, պետք է խոստովանեմ, որ այժմ պետական ոլորտում գործունեությունս ամբողջովին կլանում է իմ ժամանակը եւ բավարարում աշխատանքային պահանջմունքներս:

Դուք իրավացի եք, պետական բարձր պաշտոններում իմ ծառայության աշխատանքային փորձը ինձ վստահություն է տալիս, որ հայրենիքիս համար օգտակար կլինեմ նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանի պատասխանատու դիրքում:

Առհասարակ, պատասխանատվության զգացումը միշտ եղել է ինձ համար այն հզոր խթանը, որը ուղղորդում է իմ յուրաքանչյուր գոր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԽՈՐԱՑՎՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 16-ին պաշտոնական այցով Վրաստանում էր գտնվում Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էր նաեւ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրիամովը:

Հայաստանի պատվիրակությանն ընդունեց Վրաստանի պաշտպանության նախարարի տեղակալ Լեւան Գիրշիաշվիլին: Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության ներկան եւ ապագա հեռանկարները, անդրադարձան տարածաշրջանային անվտանգության խնդիրներին: Զրուցակիցները նշեցին, որ պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության խորացումը առաջնահերթությունների թվին է դաս-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ԵԱՀԿ խորհրդարանական ասամբլեայի գլխավոր քարտուղար Սպենսեր Օլիվերը:

Այցի շրջանակներում, նա հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ: Հանդիպումներում քննարկվեցին տարածաշրջանային անվտանգության հետ առնչվող հարցեր: Կողմերը քննարկեցին նաեւ եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման ուղղությամբ իրականացվող միջոցառումների հարցը:

ՔՆՆԱՐԿՎԵԾԻՆ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՐԾԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յում անցկացվելիք գագաթաժողովին ներկայացնել կոնկրետ ծրագրեր:

Եվրամիությունը 44,5 մլն եվրոյի չափով նոր ֆինանսական փաթեթ կհատկացնի Վրաստանին ԵՄ-ի հետ տնտեսական ինտեգրացման նպատակով բարեփոխումներին աջակցելու համար: Համապատասխան համաձայնագիրը հունվարի 15-ին Թբիլիսիում ստորագրել են Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության ու ընդլայնման հարցերով եվրակոմիսար Յոհաննես Հանը:

«Եվրամիության կողմից հատկացվող ֆինանսական միջոցները կօգնեն Վրաստանին կատարելու ԵՄ-ի հետ խորացված եւ համապարփակ ազատ առեւտրի վերաբերյալ համաձայնագրերի շրջանակներում երկրի ստանձնած պարտավորությունները, ինչպես նաեւ մասնավոր հատվածի զարգացմանն ու փոքր եւ միջին ձեռնարկությունների հնարավորությունների ուժեղացմանը՝ նոր կարգավորող միջավայրում ադապտացման գործընթացում»,- ստորագրման արարողությանը հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ, ԵՄ-ն ռազմավարական օգնության ծրագրի շրջանակներում, 2014-2017 թվականներին Վրաստանին կհատկացնի 330 միլիոնից մինչեւ 410 մլն եվրոյի չափով ֆինանսական ռեսուրսներ:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՆԴԱՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Եվրամիության խորհուրդն ընդունեց որոշում, ըստ որի, Վրաստանում Եվրամիության մոնիտորինգային առաքելության մանդատը երկարաձգվում է երկու տարով, մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 14-ը:

«Եվրամիության առաքելության միջոցով տարածաշրջանում ապահովվում է խաղաղությունն ու կայունությունը»,- հայտարարեց արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինը: Վրաստանում Եվրամիության մոնիտորինգային առաքելությունը ներկայացված է Եվրամիության 22 երկրի 200 անձեն ներկայացուցիչներով: Նրանք պաշտոնապես Վրաստանում գտնվում են 2008 թվականի հոկտեմբերի 1-ից՝ օգոստոսյան պատերազմի ավարտից հետո:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԱՋԱՏԱԿԱՆԱՀՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի ազատականացումն է եւ աշխարհի առաջատար շուկաներին ինտեգրվելը: «Ասոցիացման համաձայնագրի ստորագրման արդյունքում, Վրաստանը վիթխարի առաջընթաց քայլ է կատարել: Այդ համաձայնագիրը թույլ է տալիս հանելու եվրամիության հետ առեւտրական հարաբերություններում սակագնային եւ ոչ սակագնային խոչընդոտները: Բացի այդ, այն կարգավորում է առեւտրի հետ կապված հարցերի լայն սպեկտր»,- հայտարարեց վարչապետը:

Այցի շրջանակներում, Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Լիտվայի նախագահ Դալիա Գրիբաուսկայտեի, Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուի, Շվեյցարիայի ԱԳ նախարար Վիդիե Բուրկհլտերի, աշխարհի առաջատար ընկերությունների, բանկերի ներկայացուցիչների հետ, քննարկվեցին համատեղ իրականացվելիք նախագծերը:

Նշենք, որ շվեյցարական Դավոս քաղաքում անցկացվող ավանդական համաշխարհային տնտեսական գագաթաժողովին այս տարի մասնակցել են աշխարհի պետությունների եւ կառավարությունների շուրջ 50 ղեկավարներ, 2500 գործարարներ, քաղաքագետներ, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու փորձագետներ:

ԿՐԹԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԿԳՈՐԾԵՆ ՀԱՋՈՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ»

Վրաստանի կրթության նախարարությունում անցկացվեց ուսուցիչների գնահատման եւ մասնագիտական զարգացման սխեմայով նախատեսված կարգավիճակի շնորհման կարգի մշակման նպատակով հիմնված պետական հանձնաժողովի անդամների առաջին աշխատանքային հանդիպումը:

Ինչպես հայտարարեց կրթության նախարար Թամար Սանիկիձեն, հանդիպմանը քննարկվեցին հանձնաժողովի աշխատանքի կազմակերպչական հարցերը: «Ընդհանուր կրթության մասին» օրենքում կատարած փոփոխությունների համաձայն, ըստ որի, մշակվելու է ուսուցիչների գնահատման եւ մասնագիտական զարգացման սխեման, պարտավորություն էինք ստանձնել հիմնել պետական հանձնաժողով, որը մշակելու է բոլոր այն փաստաթղթերը, որոնք թվարկված են ընդհանուր կրթության մասին օրենքում: Համապատասխանաբար, հանձնաժողովը սկսում է աշխատանքը: Ըստ իս, կա 9 կետ, որ մշակվելու են հանձնաժողովի աշխատանքի շրջանակներում: Մենք իրականացնելու ենք կարեւոր եւ աշխատատար աշխատանք»,- հայտարարեց Սանիկիձեն:

Նախարարի խոսքերով, հանձնաժողովի կազմում ընդգրկված են մանկավարժներ, դպրոցի տնօրեններ, պրոֆեսորներ, ներկայացուցիչներ՝ քաղաքի ինքնակառավարման մարմնից, տարբեր գերատեսչություններից, կրթության թեմայով գործող ոչ կառավարական կազմակերպություններից ու մանկավարժների արհմիությունից:

Նախարարի տեղեկատվությամբ, մանկավարժների գնահատման նոր չափորոշիչները կգործեն հաջորդ ուսումնական տարվանից:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԽՈՐԱՑՎՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վում է՝ Վրաստանում, է՝ Հայաստանում: Որպես համագործակցության առանցքային ուղղություն՝ կարեւորվեց ռազմական կրթությունն ու ուսումը: Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալը, օգտվելով առիթից, շնորհակալություն հայտնեց վրացական կողմին Սաչխերեի լեռնային պատրաստության ուսումնական կենտրոնում հայկական զինուժի անձնակազմի մասնագիտական վերապատրաստման բարենպաստ հնարավորություններ ստեղծելու համար:

Հանդիպման վերջում երկու պետությունների պաշտպանական գերատեսչություններում միջազգային համագործակցության համար պատասխանատու պաշտոնյաները ստորագրեցին վրաց-հայկական երկկողմ ռազմական համագործակցության 2015թ. պլանը:

Այցի շրջանակներում, Հայաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալի գլխավորած պատվիրակությանն ընդունեց նաեւ Վրաստանի պաշտպանության նախարար Մինդիա Ջանելիձեն, իսկ Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախթանգ Կապանաձեն հյուրերին հրավիրեց պաշտոնական ճաշի:

Հայկական պատվիրակությունն այցելեց նաեւ Գորիում տեղակայված Վրաստանի ազգային պաշտպանական ակադեմիա: Ռազմակրթական այս օջախում Դավիթ Տոնոյանը հանդես եկավ «Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգությունը եւ միջազգային կազմակերպությունների դերակատարումը» խորագիրը կրող զեկուցումով:



ՈՒԿՐԱԻՆԱ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԳԾԻ ՇՈՒՐՋ

«Նորմանդական քառյակի» արտաքին գործերի նախարարները Բեռլինում կայացած հանդիպմանը համաձայնագիր են կնքել Ուկրաինայում սահմանազատման գծի վերաբերյալ, պայմանավորվել են սպառազինությունների հետքաշմանն աջակցելու եւ Շփման խմբի հանդիպումները շարունակելու շուրջ: Այդ մասին հայտարարել են Գերմանիայի եւ Ռուսաստանի ԱԳ նախարարներ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը եւ Սերգեյ Լավրովը:

ՈՐՈՇՈՒՄ՝ ՅԱՆՈՒԿՈՎԻՉԻ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Կիեւի Պեչորյան շրջանային դատարանը Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի ձերբակալման որոշում է կայացրել: Այդ մասին հաղորդվում է Ուկրաինայի գլխավոր դատախազության կայքում:

Գերատեսչության հաղորդագրության մեջ ասված է, որ Յանուկովիչի ձերբակալման սանկցիան թույլ կտա «գլխավոր դատախազության քննիչներին՝ պահանջելու Յանուկովիչի արտահանձնումը Ռուսաստանի Դաշնության տարածքից»:

Մեկ շաբաթ առաջ, Ինտերպոլը Վիկտոր Յանուկովիչի հետախուզում է հայտարարել: Այն ժամանակ Ռուսաստանի գլխավոր դատախազ Յուրի Չայկան հայտնեց, որ ՌԴ-ի գլխավոր դատախազությունը ուկրաինացի գործընկերներից հարցումներ չի ստացել Յանուկովիչի եւ հարեւան պետության քաղաքական այլ գործիչների հանձնման վերաբերյալ:

ԴՈՆԵՑԿՈՒՄ ՁՈՀՎԵԼ Է 13 ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉ

Հունվարի 20-ին Դոնեցկի Լենինյան շրջանի Կուպրինի փողոցի կանգառի գնդակոծման զոհ է դարձել 13 մարդ, եւս 20-ը վերքեր են ստացել: Բժիշկների տվյալներով, տուժածներից շատերը ծանր վիճակում են: Բուժօգնության են շարունակում դիմել մարդիկ, ովքեր եղել են պատահարի վայրում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը «ամենայն վճռականությամբ» դատապարտել է Դոնեցկում հանրային տրանսպորտի կանգառի գնդակոծումը եւ ընդգծել մեղավորներին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԿՊԱՀՊԱՆՎԵՆ

Եվրամիության արտաքին գործերի նախարարները որոշեցին շարունակել Ռուսաստանի նկատմամբ քաղաքականությունը եւ, մասնավորապես, պահպանել այն պատժամիջոցները, որոնք սահմանվել են Ղրիմի բռնակցմանն ու Դոնբասի աշխարհազորայինների աջակցմանն ի պատասխան: ԵՄ-ի արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին հայտարարել է, որ վերջին օրերին Ուկրաինայի իրադրությունը նկատելիորեն վատացել է:

ԱՖՐԻԿԱ

ԱՃՈՒՄ Է ԷԲՈԼԱՅԻ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ

Էբոլա վիրուսի հարուցած հիվանդության զոհերի թիվը հասել է 8 հազար 626-ի, վարակված է 21 հազար 689 մարդ: Այդ մասին վկայում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության հրապարակած տվյալները: Հիվանդանալու նշված բոլոր դեպքերը վերաբերում են Արեւմտյան Աֆրիկայի երեք երկրի՝ Գվինեայի, Լիբերիայի եւ Սիեռա Լեոնեին:

Հիվանդանալու դեպքեր են գրանցվել նաեւ Մալիում, Նիգերիայում, Սենեգալում, Իսպանիայում, Մեծ Բրիտանիայում եւ ԱՄՆ-ում: Սակայն, այս երկրների մեծ մասում վարակվածների թիվը չի գերազանցում տասը: Բացառություն է կազմում Նիգերիան, որտեղ վարակվել է 20 եւ մահացել 8 մարդ:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՎՐԱՍՏԱՆ

ԸՆԴՈՒՆՎԵՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կառավարությունը հաստատել է 2015 թվականի համար ասոցիացման օրակարգի գործողության ծրագիրը:

Այս մասին կառավարության նիստի ավարտից հետո հայտարարեց եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն: «Դա ծավալուն փաստաթուղթ է, բովանդակում է շուրջ 200 էջ: Փաստաթղթում մանրամասը ներկայացված են բոլոր միջոցառումները: Հուսով եմ, որ ծրագրի իրականացումը հաջող ավարտ կունենա»,- ընդգծեց պետնախարարը:

Հիշեցնենք, որ Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը Վրաստանը ստորագրել է անցյալ տարի, եւ ներկա դրությամբ ուժի մեջ է մտել համաձայնագրով նախատեսված կետերի 80 տոկոսը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2015-Ը՝ Շ ՀԵՊԱՏԻՏԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԻ

Հունվարի 15-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին կառավարության նիստում 2015 թվականը երկրում հայտարարեց Հեպատիտ Շ-ի դեմ պայքարի տարի:

2014 թվականի նոյեմբերին Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոյի ԱՄՆ այցի ընթացքում համաձայնություն էր ձեռք բերվել, ըստ որի, 2015 թվականին ԱՄՆ-ից Վրաստան է բերվելու Հեպատիտ Շ-ի բուժման պատրաստուկ՝ սոֆոսբուվիր, որը հասանելի կլինի հանրապետությունում բնակվող հիվանդների համար:

«Այս տարի մեր կառավարության գլխավոր մարտահրավերը լինելու է Հեպատիտ Շ-ի լրիվ հաղթահարումը, ուստի, մենք 2015 թվականը հայտարարում ենք Հեպատիտ Շ-ի դեմ պայքարի տարի»,- ասել է Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով, Վրաստանում Հեպատիտ Շ-ի խնդիրը երկար տարիներ եղել է անհաղթահարելի, բայց «կառավարության մեծ ջանքերի շնորհիվ, այսօր խոսքն այդ հիվանդության լիակատար հաղթահարման մասին է»:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ՝ ՉՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՅԵՐՈՒՄ ԱՂԲ ԹԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը տարեվերջին ընդունեց փոփոխություններ «Թափոնների կառավարման մասին» օրենսգրքում:

Հունվարի 15-ից ուժի մեջ մտած օրենսգրքի համաձայն, խստացված է փողոցում մաքրության պահպանման վերահսկողությունը, եւ աճել են չնախատեսված վայրում աղբ թափելու տուգանքները:

Փողոցում մաքրության պահպանմանը կհետեւի պարեկային ոստիկանությունն իր իրավասության շրջանակներում՝ տեղական իշխանությունների եւ Վրաստանի շրջակա միջավայրի նախարարության հետ մեկտեղ:

Նվազագույն տուգանքը՝ 50 լարի (շուրջ 26 դոլար), նախատեսված է շների կամ այլ ընտանի կենդանիների կղանքով տարածքի աղտոտման դեպքում, եթե կենդանու տերն անմիջապես չի մաքրում տարածքը:

Ֆիզիկական անձանց համար առավելագույն տուգանքը սահմանված է 500 լարիի (շուրջ 263 դոլարի) չափով:

Շրջակա միջավայրը մինչեւ 2 կիլոգրամ աղբով աղտոտելու համար իրավազանցն ստիպված կլինի վճարել 80 լարի (շուրջ 42 դոլար), իսկ եթե աղբը նետել են անմիջապես շենքից՝ 100 լարի (շուրջ 52,6 դոլար): Նույն տուգանքն է սահմանված չնախատեսված վայրում մարտկոցների, կուտակիչների, էլեկտրական լամպերի, էլեկտրատեխնիկայի, ինչպես նաեւ կտրող- ծակող առարկաների, ապակու բեկորների եւ այլ նյութերի նետման համար: Ավելի քան 1 խորանարդ մետր շինանյութ թափելու համար տուգանքը 200 լարի է:

Ավտոմոբիլից կամ հասարակական տրանսպորտից աղբի նետման համար իրավախախտը կտուգանվի 120 լարիով (շուրջ 63 դոլարով):

ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՍՏԱՑՆՈՒՄ ԵՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Վրաստանում Քրեական օրենսգրքում ուղղումներ են մշակվում ահաբեկչության դեմ պայքարի եւ «արաբական գարնանը» երկրի քաղաքացիների մասնակցության դեմ արշավի շրջանակներում:

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանին հայտարարեց, որ երկրի քրեական օրենսգիրքը ներառում է նոր հոդված, որի համաձայն, երկրի սահմաններից դուրս անօրինական զինված կազմավորումներին Վրաստանի քաղաքացիների մասնակցությունը համարվում է հանցագործություն: Նրա խոսքով, օտար երկրի տարածքում զինված կազմավորմանը մասնակցությունը, որը նախատեսված չէ տվյալ պետության օրենսդրությամբ, այնպիսի նպատակներով, որոնք հակասում են Վրաստանի շահերին, կպատժվի օրենքով:

Նախարարը նշեց, որ օրենսդրական նախաձեռնությունը, որը մշակվել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունում, արդեն ներկայացվել է խորհրդարան:

Ինչ վերաբերում է Վրաստանի այն քաղաքացիներին, ովքեր կռվում են Ուկրաինայում, ապա, ինչպես հայտարարել է արդարադատության նախարարը, վերոհիշյալ փոփոխությունները նրանց վրա կտարածվեն սոսկ այն դեպքում, եթե նրանք դառնան անօրինական զինված կազմավորումների անդամներ:

ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՃԻԿԱԻՁԵՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Հունվարի 23-ին Վրաստանի ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն պաշտոնաթողության դիմումով դիմել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն:

«Իմ որոշումը պայմանավորված է նրանով, որ վերջին ժամանակներս մեղադրանքներ են հնչում այն մասին, թե ես իբր թաքցնում եմ Զուրաբ Վազագաշվիլու սպանության մասնակիցներին: Չնայած, որ այդ մեղադրանքը չի համապատասխանում իրականությանը, ես բարոյական պատասխանատվություն եմ զգում եւ թողնում եմ իմ զբաղեցրած պաշտոնը»,- ասված է Ճիկաիձեի հայտարարության մեջ, որը հրապարակված է ՆԳ նախարարության կայքում:

Զուրաբ Վազագաշվիլու գործը վերստին ակտուալ է դարձել այն բանից հետո, երբ հունվարի 20-ին նրա հայրը՝ Յուրի Վազագաշվիլին, զոհվեց Շիդա Քարթլիի տարածաշրջանի Կասպիի շրջանի Ղարապիլա գյուղի գերեզմանատանը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին բանավոր ընդունեց ՆԳ նախարարի պաշտոնաթողության դիմումը, իսկ դրա բավարարումը տեղի կունենա երկուշաբթի: Վրաստանի ՆԳ նախարարի պաշտոնակատար է նշանակվել ՆԳ առաջին փոխնախարար Վախթանգ Գոմելաուրին:

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ. ՈՐԴՈՒ ՇԻՐԻՄԻ ՎՐԱ ՊԱՅԹԵՑՎԵԼ Է ՅՈՒՐԻ ՎԱԶԱԳԱՇՎԻԼԻՆ

Հունվարի 20-ին, Կասպիի շրջանի Ղարապիլա գյուղի գերեզմանատանը, որդու՝ 2006 թվականին Թբիլիսիի «Դինամո» թենիսի հրապարակի շրջակայքում գնդակահարված Զուրաբի շիրիմի վրա, զոհվել է Յուրի Վազագաշվիլին:

Ինչպես տեղեկացրել է դատախազությունը, Յուրի Վազագաշվիլին զոհվել է շիրիմի վրա դրված ծաղկամանում տեղակայված ռումբի պայթյունի արդյունքում:

Տեղի ունեցածի կապակցությամբ, Վրաստանի դատախազությունը հարուցել է քրեական գործ:



ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՆԵՐԱՌԵՆ ՆՈՐ ԱՌԱՐԿԱ

Ընտրության համար ազգային քննություններում կներառվի նոր առարկա՝ քաղաքացիական կրթություն:

Բուհերը իրենք կընտրեն, թե որ առարկան են ներառելու պարտադիր ընտրությանը ենթակա երեք առարկաների թվում:

Նշենք, որ մինչ այդ դիմորդները պետք է հանձնեին երեք պարտադիր առարկա՝ վրաց լեզու եւ գրականություն, օտար լեզու եւ ընդհանուր ունակություններ ու ոչ պարտադիր՝ ըստ ընտրության ութ առարկաներից մեկը:

Վրաստանում միասնական ազգային քննությունները կսկսվեն հունիսի 25-ին:

ՍԱԿՐԵԲՈՒԼՈՆ ՓՈԽԵՑ ՍՈԼՈԼԱԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2014-ի տարեվերջին Թբիլիսիի սակրեբուլոն՝ 23 կողմ եւ 10 դեմ ձայներով, փոխեց Սոլոլակի թաղամասի կարգավիճակը: Այն վերաբերում է թաղամասի լանդշաֆտային կանաչապատման գոտուն: Կարգավիճակի փոփոխման դեմ հանդես եկան սակրեբուլոյի «Ազատ ժողովրդավարներ» եւ «Ազգային շարժում» խմբակցությունները:

ՆՊԱՍՏ՝ ԸՍՏ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍԽԵՄԱՅԻ

Սոցիալապես անպաշտպան անձանց օգնությունը այսուհետ կտրվի դիֆերենցված սխեմայով: Այդ մասին հայտարարեց սոցիալական սպասարկման գործակալության ղեկավար Գայոզ Տալախվաձեն: Նրա հայտարարությամբ, նոր մեթոդոլոգիան թույլ է տալիս այդ ուղղությամբ իրականացնել արմատական փոփոխություն: Նա ուշադրությունը բեւեռեց այն փաստին, որ գնահատման չափորոշիչները կլինեն օբյեկտիվ, եւ դրանց վրա սուբյեկտիվ կարծիքի ազդեցությունը կհասցվի նվազագույնի: «Ով ավելի մեծ կարիքի մեջ է, նա ավելի շատ կստանա: Եթե նախկինում սահմանված էր 57 հազար միավորի սահմանագիծը, ապա ներկայումս կլինեն մի քանի սահմանագծեր: Մասնավորապես, ներդրվում է 30 հազար, 57 հազար, 60 հազար եւ 65 հազար միավորի սահմանագիծը: Բացի այդ, UNICEF-ի պահանջով ու առաջարկությամբ ներդրվում է երեխայի համար նախատեսված հավելում, որը կտրվի բոլոր այն մարդկանց, ովքեր ունեն 100 հազար միավորից պակաս, եւ յուրաքանչյուր երեխայի հաշվով այն սահմանված կլինի 10 լարիի չափով»,- հայտարարեց Գայոզ Տալախվաձեն:

ՆՈՐ ՏԱՐՈՒՄ ԼԱՐԻԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Վրաստանի առեւտրային բանկերում եւ արժույթի փոխանակման կետերում ամերիկյան մեկ դոլարի արժեքը գերազանցել է 2 լարին: Հունվարի 23-ի դրությամբ, «Վրաստանի բանկում» սպասարկյալները կարող են 1 դոլարը ձեռք բերել 2,04 լարիով, «Բանկ TBC»-ում՝ 2,01 լարիով, «Ռեսպուբլիկա» բանկում՝ 2,03 լարիով, «Լիբերթի բանկում»՝ 2,02 լարիով: Առեւտրային բանկերում 1 դոլարն ընդունում են 1,95-1,96 լարիով:

Նշենք, որ լարիի փոխարժեքն սկսել է իջնել անցյալ տարվա նոյեմբերից: Նոյեմբերի 1-ին դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքը կազմում էր 1,67: Լարիի փոխարժեքի պահպանման համար, անցյալ տարվա վերջին Վրաստանի ազգային բանկը վաճառել է 80 միլիոն ամերիկյան դոլար: Դեկտեմբերի 31-ին 1 դոլարն արժեր 1,86 լարի:

Նոր տարում լարիի արժեզրկումը շարունակվել է: Ազգային բանկի կողմից հաստատված փոխարժեքի համաձայն, հունվարի 23-ից ԱՄՆ-ի մեկ դոլարը կարելի կլինի ձեռք բերել 1,98 լարիով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ.«ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵՐՁԱՎՈՐ ՀԱՐԵՎԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՄՏԵՐԻՄ ԲԱՐԵԿԱՄ ԵՐԿՐՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծունեությունը եւ ճանապարհ հարթում դեպի կոնկրետ ձեռքբերումները:

- Արդեն վեց ամիս է, ինչ Դուք Վրաստանում ներկայացնում եք Հայաստանը: Մի քանի խոսք՝ Ձեր տպավորությունների եւ Վրաստանում հայաստանյան դիվանագիտական առաքելության առաջնահերթությունների մասին: Ձեր կարծիքով, ի՞նչ է առաջին հերթին բնորոշ Վրաստան-Հայաստան փոխհարաբերություններին:

- Վրաստանում, առաջին հերթին, ինձ վրա տպավորություն է գործել մարդկանց ջերմ եւ բարյացակամ վերաբերմունքը, ինչը ես, ընդհանրապես, շատ բարձր եմ գնահատում ե'ւ մարդկային, ե'ւ աշխատանքային տեսակետից: Դրա միջոցով ձեւավորվող մթնոլորտը լավ ֆոն է ստեղծում թե' անձնական, թե' գործնական հարաբերությունների հաստատման ու զարգացման համար, ինչը, իր հերթին, առաջնային նշանակություն ունի դիվանագետի աշխատանքում:

Ինչ վերաբերում է առաջնահերթություններին, ապա, հաշվի առնելով, որ աշխարհաքաղաքական տեսակետից Վրաստանը Հայաստանի համար վճռորոշ երկիր է, փաստորեն, դարպաս է դեպի արտաքին աշխարհ, ուստի հայ-վրացական հարաբերություններում ամենաչնչին զարգացումը, առաջընթացը կարեւորագույն նշանակություն ունի: Կարելի է ասել, որ առաջնահերթություն չունեցող հարցեր մեր երկրների հարաբերությունների օրակարգում չկան:

Այնուամենայնիվ, հաղորդակցության բնագավառը եւ հայկական համայնքի առկայությունը ես դիտարկում եմ որպես այն հենակետերը, որոնց շուրջ եւ որոնց հիմքի վրա պետք է կառուցվի հայ-վրացական բազմակողմ ու բազմազան հարաբերությունների ամբողջ համակարգը: Կարծում եմ, որ «եղբայրական հարաբերություններ» հասկացությունը, որը կասկածի տակ չեն առնում ո'չ Հայաստանում, ո'չ էլ Վրաստանում, պետք է լցվի նոր բովանդակությամբ, որը համահունչ կլինի XXI դարում մեր երկրների եւ ժողովուրդների առջեւ ծագած քաղաքական ու սոցիալական մարտահրավերներին:

- Ինչպես հայտնի է, Վրաստանը կողմնորոշված է Եվրամիության եւ ՆԱՏՕ-ին անդամակցությանը, ստորագրել է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը: Իսկ Հայաստանը միտված է անդամակցել Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) եւ ՀԱՊԿ-ի անդամ է: Որքանո՞վ կարող է կողմնորոշումների վերոնշյալ տարբերությունն ազդեցություն գործել երկու երկրների հարաբերությունների վրա: Ինչպիսի՞ն են ի շահ երկու երկրների՝ Վրաստանի եվրոպական եւ Հայաստանի ԵԱՏՄ-ի կողմնորոշման օգտագործման հնարավորությունները:

Ընդհանրապես, ինչպիսի՞ն է մեր երկու երկրների միջեւ տնտեսական, առեւտրական փոխհարաբերությունների դինամիկան: Որքանո՞վ են երկու կողմերից լրիվությամբ օգտագործվում ունեցած ներուժը:

- Ակնհայտ է, որ տարբեր քաղաքական, տնտեսական ու ռազմական միավորումներին պատկանելության պարագան պետությունների փոխհարաբերությունների համար լրացուցիչ մարտահրավեր է, եւ այն կարելի է հաղթահարել միայն փոխադարձաբար համապատասխան քաղաքական կամք դրսեւորելու դեպքում:

Բարեբախտաբար, այդպիսի կամք չի պակասում ո'չ Հայաստանի, ո'չ էլ Վրաստանի իշխանություններին: Նման հայտարարություն անելու իրավունք ինձ տալիս է ոչ միայն մեր երկրների ղեկավարների որդեգրած պաշտոնական քաղաքականությունը, այլեւ Վրաստանում Հայաստանի առաքելության ղեկավարի պաշտոնավարման ընթացքում իրականացված աշխատանքային շփումները:

Վերջին տարում տեղի ունեցած բոլոր մակարդակներով փոխայցելությունների ժամանակ քննարկումների համար առաջին հարցը եղել է այն, թե ինչպես Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցության եւ Վրաստանի Եվրամիության (ԵՄ) ասոցիացման իրողությունը օգտագործել ի նպաստ մեր երկրների տնտեսական զարգացման ու քաղաքական փոխըմբռնման:

Մեր պետությունների պաշտոնատար անձինք՝ սկսած երկրների նախագահներից, ավարտած համապատասխան գերատեսչությունների ղեկավարներով, բազմիցս հայտնել են վերոնշյալ գաղափարին իրենց հավատարմության մասին եւ տեղյակ են պահել այդ ուղղությամբ իրականացվող քայլերին:

Ավա՜ղ, այստեղ պատրաստի «դեղատոմսեր» չկան, մենք ինքներս այժմ մշակում ենք անհրաժեշտ միջոցներ՝ մաքսային, հարկային եւ այլ բնագավառներում, սակայն համոզված ենք, որ կհասնենք մեր նպատակին՝ ի շահ մեր երկու պետությունների ու ժողովուրդների:

Արդեն կան կոնկրետ պայմանավորվածություններ այդ ուղղությամբ, որոնք ապացուցում են, որ Հայաստանի միանալը ԵԱՏՄ-ին եւ Վրաստանի ԵՄ-ի հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը խոչընդոտ չեն դառնա մեր երկու երկրների միջեւ փոխշավետ համագործակցության համար: Այսպես, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի դեկտեմբերին Թբիլիսի կատարած այցի շրջանակներում, վերջնականապես ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ազատ առեւտրի մասին համաձայնագիրը պահպանվում է. մաքսատուրքեր մեր երկրների միջեւ չեն լինելու:

Եթե մի կողմ թողնենք մասնագիտացված հարցերը, ապա կարող եմ ասել, որ գլխավոր գաղափարը կայանում է նրանում, որ Վրաստանը Հայաստանի համար պետք է կատարի դեպի ԵՄ «լուսամուտի» գործառույթը եւ, համապատասխանաբար, Հայաստանը Վրաստանի համար՝ դեպի ԵԱՏՄ:

Հենց այս խնդրի լուծումից կախված կլինի մեր երկու երկրների միջեւ տնտեսական, առեւտրական փոխհարաբերությունների հետագա զարգացման դինամիկան եւ արդյունավետությունը:

- Ձեր կարծիքով, ի՞նչ հնարավորություններ կան Հայաստանում վրացական գործարարության, իսկ Վրաստանում հայկական գործարարության մասնակցության մակարդակի բարձրացման համար: Ի՞նչ համատեղ նախագծեր կարող են իրականացվել վրաց եւ հայ գործարարների կողմից:

- Տնտեսական համագործակցությունը, այդ թվում՝ նաեւ անհատ-գործարարների միջոցով, միշտ եղել է հայ-վրացական հարաբերությունների խարիսխը: Համագործակցության ավանդական ոլորտներ են հանդիսացել էներգետիկան, տրանսպորտը, գյուղմթերքների արտադրությունը, սննդարդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունն ու հանքարդյունաբերությունը, իսկ վերջին տարիներին հատկապես զարգացել է տուրիզմը:

Մեր երկրների միջեւ բնիզնեսի, առեւտրաշրջանառության ծավալները տարեցտարի աճում են: Առանձնապես նկատվում է հայկական բիզնեսի աճը Վրաստանի ուղղությամբ, ինչը հիմնականում պատճառաբանվում է նրա զարգացմամբ եւ սպառման համար նոր հնարավորությունների որոնման անհրաժեշտությամբ:

Եթե նախկինում ավելի շատ Վրաստանն էր ապրանքներ արտահանում Հայաստան, իսկ Հայաստանից Վրաստան արտահանումը բավականին սահմանափակ էր, ապա 2013 թվականից դրությունը սկսեց փոխվել: Այժմ Հայաստանից Վրաստան ներմուծման ծավալներն աճել են գրեթե երեք անգամ՝ կազմելով Վրաստանի ընդհանուր ներկրումների 2,5%-ը: Եթե 2012 թվականին Հայաստանից Վրաստան ներմուծումը կազմել է մոտավորապես 71 մլն դոլար, ապա 2013-ին՝ արդեն 182 մլն, իսկ 2014 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում՝ 190 մլն դոլար: Տպավորիչ առաջընթաց է:

Ինչպես արդեն նշեցի, ծավալման տեսակետից առանձնանում է զբոսաշրջությունը: 2013 թվականին Վրաստան այցելած զբոսաշրջիկների թվով Հայաստանը երրորդն է եղել: Վրացական պետությունը, արժեւորելով Վրաստանում հայ գործարարների այսօրվա ներկայությունը, շարունակում է խրախուսական քաղաքականություն վարել բիզնեսի այդ ոլորտում: Օրինակ, Վրաստանի ծովափնյա՝ Քոբուլեթիի եւ Անակլիայի շրջաններում ամենաքիչը 50 սենյակ ունեցող հյուրանոցների սեփականատերերը, ովքեր մեկ մլն լարիից ավելի ներդրում են կատարել, 15 տարի ժամկետով ազատվում են գույքահարկի եւ շահութահարկի վճարումից:

Մի խոսքով, մենք ակնկալում ենք, որ այդ դրական զարգացումները, որ տեղի են ունեցել մեր տնտեսական հարաբերություններում, հետագայում էլ կպահպանեն իրենց ձեռք բերած դինամիկան:

- Եթե փորձեք ընդհանուր առմամբ գնահատել Վրաստանի ներքաղաքական իրավիճակը, ինչպիսի՞ն է Ձեր բնորոշումը:

- Կարծում եմ, որ այն ժամանակաշրջանը, ինչ ես աշխատում եմ Վրաստանում, բավական չէ նստավայր երկրի ներքաղաքական իրավիճակին խորապես հասու լինելու համար: Այնուամենայնիվ, ձեր հարցը անպատասխան չթողնելու համար, կարող եմ ասել, որ ինձ համար՝ որպես դեսպան, կարեւորն այն է, որ Վրաստանում կա կայուն, կառավարման լծակներն իր ձեռքում ամուր բռնած, ժողովրդավարական սկզբունքների հիման վրա կառուցված իշխանություն: Դրանք լավագույն պայմաններ են, որպեսզի երկրում հավատարմագրված այլ պետության ներկայացուցչությունը կարողանա իրականացնել իր վրա դրված պարտականությունները:

- Ձեր կարծիքով, ի՞նչ դեր է կատարում վիրահայ համայնքը վրաց ներքաղաքական կյանքում, որքանո՞վ է այն ինտեգրված երկրի հասարակական կյանքում: Գաղտնիք չէ, որ, մասնավորապես Թբիլիսիում, Բաթումիում ինտեգրման մակարդակը շատ ավելի բարձր է, քան տարածաշրջաններում: Խոսքը վերաբերում է պետական լեզվի իմացությանը, հասարակական կյանքին մասնակցության մակարդակին եւ այլն: Ի՞նչ կասեիք այդ մասին:

- Եթե մենք խոսում ենք Վրաստանի ներքաղաքական կյանքում հայկական համայնքի դերի մասին, ապա սկզբից պետք է իրարից տարանջատենք հայկական համայնքի՝ որպես միասնության եւ նրա առանձին ներկայացուցիչների հանրագումար դերերը:

Առաջին դեպքում պետք է ակնկալել, որ իր ուրույն մշակութային, հոգեւոր ու հասարակական եւ այլ ակտիվությամբ համայնքն աչքի ընկնող տեղ գրավի բազմազգ Վրաստանի գեղատեսիլ «քարտեզի» վրա: Ես տեղյակ եմ, որ այդ առումով վիրահայ համայնքի կյանքում գրանցվել են լուրջ դրական տեղաշարժեր, եւ այստեղ ես կուզենայի առանձնացնել Վիրահայոց թեմի ու անձամբ թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի դերակատարությունը:

Ի դեպ, պետք է նշեմ, որ Սրբազանը, ով քաջատեղյակ է իր հոգեւոր հոտի, առհասարակ վիրահայ համայնքի անցուդարձին, հիմնախնդիրներին ու հոգսերին, անփոխարինելի աշխատանք է կատարում՝ համայնքի հետ շփումներում: Նորին սրբությունը հաճախ մասնակցել է իմ աշխատանքային եւ ճանաչողական հանդիպումներին, նա նաեւ ուղեկցել է ինձ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան իմ աշխատանքային այցի ժամանակ:

Ինչ վերաբերում է երկրորդին, ապա քաղաքական, տնտեսական, գիտական, արվեստի, մի խոսքով, երկրի կյանքի ամենատարբեր բնագավառներում, իմ կարծիքով, հայական համայնքի դերը պետք է ձեւավորվի նրա անհատ ներկայացուցիչների պրոֆեսիոնալ հաջողությունների հաշվին: Այստեղ ես հատկապես կարեւորվում եմ պետական լեզվի իմացությունը, կրթությունը, կարիերային առաջադիմությունը:

Հակիրճ կուզենայի անդրադառնալ նաեւ ջավախահայության պարագային: Վերջերս ես շատ հետաքրքիր եւ ուսանելի այցելություն եմ կատարել Ջավախք, որի ընթացքում համոզվել եմ, որ չնայած տարբեր սոցիալական ու տնտեսական բարդություններին, որոնց ընդհարվում է տեղական բնակչությունը, նրանց մոտ չի նկատվում ո'չ ընկճվածություն, ո'չ էլ պասսիվություն: Ընդհակառակը, նրանք ձգտում են ակտիվորեն տնօրինել իրենց կյանքը, բարելավել իրադրությունը տարածաշրջանում: Բավականին ակտիվ են այնտեղ հայկական հասարակական կազմակերպությունները, աճում է ջավախքցիների, հատկապես՝ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների ակտիվությունը սոցիալական ցանցերում, ինչպես նաեւ նրանց պահանջատիրությունը տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ: Կարծում եմ, որ այդ ամենը Վրաստանի ներքաղաքական կյանքում ջավախահայության դերի բարձրացման վստահելի նախապայման է:

- Հավանաբար, մեկ անգամ չէ, որ Վրաստանի ազգությամբ հայ քաղաքացիները տարբեր հարցերով դիմում են դեսպանություն, անմիջականորեն՝ Ձեզ: Եվ շատ հաճախ այդ հարցերը բացարձակապես չեն առնչվում դեսպանության իրավասություններին: Նման դեպքերում ինչպե՞ս եք վարվում եւ ի՞նչ խորհուրդ կտայիք մեր ընթերցողներին այդ առումով:

- Նախ, ցանկանում եմ ասել, որ մեր դեսպանությունը՝ սկսած նրա ղեկավարից, ավարտած անձնակազմի ամեն մի ներկայացուցչով, տրամադրված է հնարավորինս օգտակար լինել եւ զորավիգ կանգնել Վրաստանի հայազգի քաղաքացիներին նրանց հուզող բոլոր հարցերում: Դա բխում է ոչ այնքան մեր բարյացակամությունից, որքան մեր առջեւ դրված խնդրից՝ աջակցել հայկական համայնքին իր օրինական իրավունքների կիրառման ու շահերի ապահովման հարցում՝ նպաստելով նրա ազգային ինքնության պահպանությանը եւ վրաց հասարակությունում նրա սոցիալական դերի բարձրացմանը: Բացի այդ, մենք պարզապես ուզում ենք, որ դեսպանություն դիմած ցանկացած մարդ, առնվազն գոնե մեկ քայլով առաջ ընթանա իր առջեւ ծառացած խնդրի լուծման գործում: Եվ, կարծում եմ, որ հիմնականում մեզ հաջողվում է իրագործել այդ սկզբունքը:

Սակայն հաճախ, դուք միանգամայն իրավացի եք, վրաստանահպատակ մեր հայրենակիցները դիմում են ՀՀ դեսպանություն այնպիսի հարցերով, որոնցում մենք չենք կարող աջակից լինել այն պարզ պատճառով, որ դա դուրս է գալիս մեր իրավասությունների շրջանակից եւ կարող է որակավորվել որպես միջամտություն Վրաստանի ներքին գործերին: Ուստի, նման դեպքերում, ամենաշատը, ինչ մենք կարող ենք անել, խորհուրդ տալն է, թե ինչպես նրանք վարվեն:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)